ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2023 թվականի N 658-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 460-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հիմք ընունելով ՀՀ կադաստրի կոմիտեի 12/05/2023 թվականի N Կ-12052023-06-0007 գույքի նկատմամբ (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի 18 ապրիլի 2023 թվականի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-003-0017-0001-001-007 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 460-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1 Որոշման 1-ին կետում «Ս. Շահումյան փողոց, 11 շենք, 6 փոստային հասցեն» բառակապակցությունը փոխարինել «Ս. Շահումյան փողոց, 11 շենք, 6/1 փոստային հասցեն» բառակապակցությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. մայիսի 23
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2023 թվականի N 659-Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 48[1] հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 46.2 կետով և հաշվի առնելով Ֆրունզիկ Բեգլարի Լալայանի դիմումը, հողամասի սեփականության իրավունքի N 16052023-06-0014 –վկայականը՝

որոշում եմ.

1.Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 8/2 հասցեում 06-002-0047-0186 կադաստրային ծածկագրով, 0.001 հա մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով, 42 տարի ժամկետով՝ տարեկան 20000.0 (քսան հազար) դրամ արժեքով, տրամադրել Ֆրունզիկ Բեգլարի Լալայանին՝ խանութ կառուցելու համար:

2. Հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կառուցապատման իրավունքի պայմանագիրը կնքելու պահից:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. մայիսի 23
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2023 թվականի N 660-Ա

*06-112-0081-0005 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՅՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 1244170 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի հատակագծերը և 02.05.2023թ. տրված եզրակացությունը՝

որոշում եմ.

1.Հաստատել Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող Օձուն գյուղի կադաստրային քարտեզի 06-112-0081-0005 ծածկագրում գտնվող վարչական շենքի զբաղեցրած հողամասի 0.07948 հա մակերեսը՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Տալ համաձայնություն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 1244170 վկայականով գրանցված 06-112-0081-0005 ծածկագրում գտնվող հողամասի մակերեսի փոփոխությանը՝ համաձայն որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

3.Նշված հողամասի սահմանային չափերի փոփոխություն չի կատարվել:

4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Լոռու մարզի Օձուն գյուղի 06-112-0081-0005 ծածկագրում գտնվող 0.07948 հա մակերեսով հողամասը բաժանել 0.07565 հա և 0.00383 հա մակերեսների:

5.Բաժանված՝ 0.07565 հա մակերեսով հողամասին և հողամասում գտնվող գույքին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 6-րդ փողոց, 10 փոստային հասցեն, իսկ 0.00383 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 6-րդ փողոց, 10/2 փոստային հասցեն:

6.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

7.Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերի:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. մայիսի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2023 թվականի N 661-Ա

ՍԱՅԱԴ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ, ԲԵԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, 06-058-004-0012 ԾԱԾԿԱԳՐՈՎ N 843858 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ 06-058-0004-0012 ԾԱԾԿԱԳՐՈՎ՝ 0.19179 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՅԱԴ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ, ԲԵԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, ‹‹Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին›› օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով,

հիմք ընդունելով Արմենուհի Սարգսի Դանիելյանի դիմումը, սեփականության իրավունքի թիվ 843858 վկայականը, համասեփականատերերի համաձայնությունը,«ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով 1-ին պետական գրանցման ժամանակ կատարված սխալը՝

որոշում եմ.

1. Լոռու մարզի Հագվի բնակավայրի կադաստրային քարտեզի 06-058-0004-0012 ծածկագրով, 0.321 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ դադարեցնել քաղաքացիներ Սայադ Մամիկոնի Գրիգորյանի (ծնվ. 04.01.1957 թ.), Արմենուհի Սարգսի Դանիելյանի (ծնվ. 02.01.1959թ,) Գրիգորյան Բելա Սայադի (ծնվ.24.03.1981թ), Դավիթ Սայադի Գրիգորյանի (ծնվ. 22.08.1986թ.) համասեփականության իրավունքը:

2.Վերականգնել Սայադ Մամիկոնի Գրիգորյանի, Արմենուհի Սարգսի Դանիելյանի, Բելա Սայադի Գրիգորյանի, Դավիթ Սայադի Գրիգորյանի Լոռու մարզի Հագվի համայնքում գտնվող, 06-058-0004-0012 ծածկագրով բնակելի տան, օժանդակ շինությունների և 0. 19179 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:

3.Լոռու մարզի Հագվի գյուղում 06-058-0004-0012 ծածկագրով 0.19179 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հագվի, 5-րդ փողոց, 1-ին փակուղի, 4 փոստային հասցեն:

4.Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

2023թ. մայիսի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2023 թվականի N 662-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ԳԱՌՆԻԿԻ ՁԱՎԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ N 2286750 ԵՎ N 2274538 ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 08-Ի N 571-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստան Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման, և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով.

հիմք ընդունելով Արթուր Ձավարյանի դիմումը, սեփականության իրավունքի N 2286750 և N 2274538 վկայականները՝

որոշում եմ.

1. Սեփականության իրավունքի պետական գրանցման N 2286750 և N 2274538 վկայականներով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցման և սպասարկման գործառնական նշանակության հողամասերը և

հողամասում առկա անշարժ գույքերը միավորել և առաջացած մեկ միավոր գույքին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, 45/1 փոստային հասցեն:

2. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 2023թ. մայիսի 08-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0198-0030 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 571-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. մայիսի 24
ք. Ալավերդի